

## Ուսուցում և ցուցադրում

**Ուսուցումի և ցուցադրութեան ծառայութիւնները կրնան լիազօրուած ըլլալ, որ ձեր մատակարարին արտօնուի, որ ան ձեզի սորվեցնէ, թէ ինչպէս կատարէ ներկայիս ձեր ստացած IHSS-ի ծառայութիւնները:**

### Լիազօրուած Ծառայութիւններ

Ձեր մատակարարը կրնայ վճարուիլ ձեզի ցոյց տալու համար, թէ ինչպէս կը կատարուին հետևեալ ծառայութիւնները.

- Տունի աշխատանք, ինչպէս սրբել, փոշեկուլ ընել, լուալ և գետինը փայլեցնել, ձեր խոհանոցին սեղանները և լուացարանները լուալ և բաղնիքը մաքրել:
- Ծաշ պատրաստել և ետքէն մաքրութիւն ընել:
- Լուալ և չորցնել ձեր լուացքը:
- Անձնական հոգատարութեան ծառայութիւններ, ինչպէս կերցնել, լոզցնել և հագցնել:
- Բակի գործ՝ աճած խոտը կամ մոլախոտը մաքրելու, երբ անոնք կրնան հրդեհի պատճառ ըլլալ:

### Կարևոր տեղեկութիւններ

Եթէ դուք կ'ուզէք գիտնալ, թէ արդեօ՞ք դուք իրաւասու էք այն բանին, որ ձեր մատակարարը ձեզի սորվեցնէ, թէ ինչպէս կատարէ ներկայիս ձեր ստացած ծառայութիւնները, ահա քանի մը բաներ, զորս պէտք է գիտնաք.

- Ձեր մատակարարը պէտք է ծառայութիւնները կատարելու ձեր ձեզի սորվեցնելու հմտութիւնը ունենայ:
- Ուսուցման և ցուցադրութեան ծառայութիւնները կրնան արտօնուիլ միայն երեք ամսուան համար:



- Ուսուցման և ցուցադրութեան նպատակն է առիթ տալու ձեզի, որ աւելի անկախ ըլլաք: Ասի կը նշանակէ, որ ձեր մատակարարի՝ ուսուցման և ցուցադրութեան համար լիազօրուած ծառայութիւնները ձեզի սորվեցնելը աւարտելէն ետք դուք աւելի քիչ օգնութեան պէտքը պիտի ունենաք և ձեր IHSS-ի ժամերը կրնան պակսեցուիլ:

Կապ պահէք ձեր քաունթիի IHSS-ի գրասենակին հետ այս ծառայութիւններուն մասին յաւելեալ տեղեկութիւններու համար: Ձեր ընկերային ծառայողը պիտի որոշէ արդեօ՞ք այս ծառայութիւնները կ'արտօնուին ձեզի համար: